Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2024թվականի N 147-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՅԳԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԽԱՆՋՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՄԱՅԻՍՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԼԵՆՈՒՂՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՄԱՎԻՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՄԱՎԻՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 81-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 64-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, 13-րդ հոդվածի 2-րդ կետի զ) ենթակետով, 14-րդ հոդվածի 2-րդ մասի ը) կետով, 24-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվանի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 93.215.841629), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.834548), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյանի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.838155),

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.838753), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյանի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.838566), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղու առողջության կենտրոն» (պետական գրանցման համար՝ 83.215.839819) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սահմանել, որ՝

1)«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվանի բժշկական ամբուլատորիա», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկի բժշկական ամբուլատորիա», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյանի բժշկական ամբուլատորիա», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատի բժշկական ամբուլատորիա», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյանի բժշկական ամբուլատորիա», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղու առողջության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն է և վերջինիս են անցնում միաձուլված իրավաբանական անձերի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան:

2)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան՝ համայնքի բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման գործունեության իրականացումն է.

3)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակներն են՝

ա. Բնակչության առողջության պահպանումը և բարելավումը

բ.Առողջ ապրելակերպի քարոզչությունը

գ.Հիվանդությունների կանխարգելումը

դ.Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը:

4)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը

կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

5) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված մարմինը Արմավիր համայնքի ղեկավարն է հետևյալ լիազորություններով՝

ա. Կազմակերպության կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ըստ անհրաժեշտության՝ հանդես է գալիս հիմնադրի անունից.

բ. Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

գ.Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ.Լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե.Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ.

զ.Հիմնադրի որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է.Հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը.Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

3.Արմավիր համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը, արժեքը, հաստատել միաձուլման պայմանագիրը, փոխանցման ակտերը:

2) Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված աշխատանքները կատարելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել միաձուլվող կազմակերպությունների գործունեության դադարման և միաձուլման արդյունքում ստեղծվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը, գույքի հանձնման և ընդունման աշխատանքները, հաստատել գույքի հանձնման-ընդունման ակտերը:

4.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. դեկտեմբերի 13
ք. Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արմավիր համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 13-ի
N 147-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՄԱՎԻՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվանի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 93.215.841629), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.834548), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյանի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.838155), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.838753), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյանի բժշկական ամբուլատորիա» (պետական գրանցման համար՝ 83.215.838566), «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղու առողջության կենտրոն» (պետական գրանցման համար՝ 83.215.839819) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման ձևով վերակազմակերպվելու արդյունքում և հանդիսանում է վերջիններիս իրավահաջորդը, որին էլ փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան:

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին»,

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներով, Հիմնադրի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից սկսած:

1.4. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Համայնքի ավագանի (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդես է գալիս Արմավիր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

1.5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.7. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձաց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.8. Կազմակերպությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, տարբերանշան, խորհրդանիշեր, ձևաթղթեր և ՀՀ օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

1)Հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

2)Հայերեն կրճատ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիրի առողջության պահպանման կենտրոն» ՀՈԱԿ,

3)Ռուսերեն լրիվ՝ общинная не коммерческая организация «Центр здравоохранение Армавира» Армавирской общины Армавирской области Республики Армения

4)Ռուսերեն կրճատ՝ ОНКО «Центр здравоохранение Армавира» Армавираской общины Армавирской области РА

5) Անգլերեն լրիվ «Armavir health care center» of Armavir community Armavir region Republic of Armenia community non-commerical organization,

6) Անգլերեն կրճատ «Armavir health care center» of Armavir community Armavir region of RA CNCO.

1.11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, ք.Արմավիր, Հանրապետության 32:

2. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը

2.1. Կազմակերպության գործունեության առարկան՝

1) բնակչության առողջության պահպանումը, բարելավումը,
2) առողջ ապրելակերպի քարոզչություն,
3) հիվանդությունների կանխարգելումը,
4) պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը:

2.2. Կազմակերպություն գործունեության նպատակը՝

1)մարդու և հանրության առողջության պահպանումը, բնակչության առողջության բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը,

2.3.Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը՝

1)բժշկական օգնություն և սպասարկում

3. Կազմակերպության կառավարումը

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

3.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Կազմակերպության հիմնադրումը,
2) Կազմակերպության գործունեության առարկային և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականցվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
3) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
4) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
5) Հաստատում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատողների թիվը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,
6) Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը,

3.4. Համայնքի ղեկավարը իրականցնում է Կազմակերպությունում ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց ոչ պատշաճ կատարման համար:

3.5. Համայնքի ղեկավարը՝

1) Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
2) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության գործունեության նկատմամբ,
3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
4) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում Կազմակերպության գործունեության վերստուգման արդյունքները,
5) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության ամրացված պետական կամ համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
6) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
7) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,
8) հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե Կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին:
3.6. Կազմակերպության գործադիր մարմինը՝
1) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը (տնօրենը), որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության տնօրենն օրենքով Հիմնադրի ու Համայնքի ղեկավարը որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարը որոշումների, սույն կանոնոադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,
2) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը,
3) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
4) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ և չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից՝ բացառությամբ մարզային հոգեկան առողջության ոլորտի, գյուղական բժշկական ամբուլատորիաների

և առողջության կենտրոնների գործադիր մարմինների ղեկավարների, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի դեպքում.

5) Տնօրենի պաշտոնին նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար,
6) Կազմակերպության գործադիր մարմին նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
3.7. Կազմակերպության տնօրենը.
1) Առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
2) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) Տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
4) Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծելու դեպքում աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին),
5) Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
6) Կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալի և Կազմակերպության աշխատողների միջև,
7) Սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
8) Օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9) Իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
10) Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման համար
11) Ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
12) Կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում Համայնքի ղեկավարի հաստատմանը,
13) Հաստատում է Կազմակերպության մասնաճյուղերի կանոնադրությունը,
14) Ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում Համայնքի ղեկավարին,
15) Իրականցնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3.8. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.9. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառված վնասի համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

3.10. Կազմակերպության տնօրենը պարտավոր չէ կատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.11. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որով սահմանվում են Կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, աշխատանքային պայմանագրի դադարման հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերն անհրաժեշտ կգտնեն: Աշխատանքային պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին:

3.12. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում տնօրենի լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը:

3.13. Կազմակերպության տնօրենի լիազորությունները դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն,

2) իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի,

3) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,

4) երեք օր անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի:

5) նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել հետևյալ հանգամանքները՝

ա) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

բ) օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

գ) նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իր պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար,

6) իր գործառույթներն իրականացնելիս Կազմակերպությանը, իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը,

7) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

8) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը,

9) զրկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից,

10) նրա ղեկավարած Կազմակերպությունը դատական կարգով ճանաչվել է սնանկ կամ ունի դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտականություն,
11) Կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները սահմանված ժամկետից հետո իր մեղքով հաշվետու ժամանակաշրջանում չեն վճարվել,
12) մեկ տարվա ընթացքում ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության,
13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4 . Կազմակերպության գույքն ու ֆինանսական միջոցները

4.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Համայնքի ղեկավարի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Համայնքի ղեկավարի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:
4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
4.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

4.10. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

4.11. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

4.12. Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

4.13. Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

4.14. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

4.15. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.16. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմի:

5. Կամակերպության վերակազմակերպումը և լուծարումը

5.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

5.2. Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Համայնքի բյուջե:

5.3. Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 148-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 09-Ի N 097-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» ՀՈԱԿ-ի կանոնադրության 15-րդ կետը և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բարեկարգում» տնօրինության կանոնադրության 41-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 09-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 097-Ա որոշումը:

2.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով, ամրացնել Հայաստանի Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող GAZ 3102/ սեփականության իրավունքի վկայական՝ PE904564, հաշվառման համարանիշ՝ 989LL11, նույնականացման համար՝ X9631020061327797/ մակնիշի ավտոմեքենան:

2.1. Գույքի պահպանման և շահագործման ծախսերը դնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վրա:

3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինությանը, իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով, ամրացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող Mercedes-Benz C240/սեփականության իրավունքի վկայական՝ XE975024, հաշվառման համարանիշ՝ 647CF61, նույնականացման համար՝ WDB2030611F494132/ մակնիշի ավտոմեքենան:

3.1.Գույքի պահպանման և շահագործման ծախսերը դնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության վրա:

4. Հանձնարարել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության հաշվապահներին՝ մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ, ավագանու հետագա նիստին հաստատման ներկայացնելու համար:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱՋԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. դեկտեմբերի 13
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 149-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ 23.14 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության եզրակացությունը /լիցենզիա 13527/, «ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ-ի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի անշարժ գույքից առանձնացվող մասի շուկայակն արժեքի գնահատման N ՎՄ-0/4186 հաշվետվությունը, «ԷՅԷՄԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Դավիթ Ապետնակյանի գրությունը և քաղաքացիներ Արմինե Սամվելի Հարությունյանի, Մելանյա Լիպարիտի Մելքոնյանի համատեղ գրված 2024 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 6789 դիմումը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն՝ ձեռք բերելու քաղաքացիներ Արմինե Սամվելի Հարությունյանին և Մելանյա Լիպարիտի Մելքոնյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոց 84 բնակելի տուն հասցեում գտնվող, 0,07 հա մակերեսով, 04-001-0059-0021 կադաստրային ծածկագրով հողամասի վրա գտնվող բնակելի տնից և հողամասից առանձնացված 23.14 քմ մակերեսով հատվածը, որը փաստացի կառուցված է ընդհանուր օգտագործման համար նախատեսված մայթի վրա և խոչընդոտում է հետիոտների ազատ և անվտանգ տեղաշարժին:

Պայմանով, որ սեփականատերերի կողմից իրենց նախաձեռնությամբ գոյություն ունեցող վթարային շենքը քանդելուց հետո ընդհանուր գույքը բաժանվի 2 մասի և 23.14 քմ մակերեսով հողամասը օտարվի Արմավիր համայնքին:

2.Ձեռք բերվող հողամասի գնման համար Արմավիր համայնքի բյուջեից նախատեսել 5,0 մլն ՀՀ դրամ և ձեռք բերված հողամասն օգտագործել ԱՔ-ԲՄԱՇՁԲ-24/4 ծածկագրի

պայմանագրով նախատեսված հիմնանորոգվող փողոցի համար, որպես բացառապես մայթի հատված՝ ապահովելով հետիոտների ազատ և անվտանգ տեղաշարժը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱՋԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 13
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 դեկտեմբերի 2024թվականի N 150-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 060-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ 10-րդ հոդվածի 4-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի թիվ 07-Լ հրամանով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման տեղական պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 26-ի թիվ 060-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱՋԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. դեկտեմբերի 13
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի

ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԹԻՎ 150-Ա ՈՐՈՇՄԱՆ

1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից

Առկա իրավիճակի գնահատում

1) ա. Ներածություն
բ. Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական
գ. Պլանավորման տարածքի բնութագիր
դ. Թափոնների քանակ և բաղադրություն
ե. Թափոնների գործածություն
զ. Իրազեկվածության աստիճան
է. Ֆինանսավորում և բյուջե
ը. Մշտադիտարկում և հաշվետվողականություն.

2) Պլանավորում
ա. Կանխատեսումներ և կանխադրույթներ
բ. Տեսլական. նպատակների և թիրախների սահմանում (կարճաժամկետ և միջնաժամկետ)
գ. Գործողությունների պլան
դ. Երկարաժամկետ զարգացում
ե. Ֆինանսավորում և բյուջե
զ. Աղբահանության և թափոնների կառավարման բյուջետավորում

3) Մշտադիտարկում և վերլուծություն

2. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ներածություն (պլանի ամփոփագիր)
2) Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական
3) Պլանավորման տարածքի բնութագիր
4) Թափոնների քանակ և բաղադրություն
5) Թափոնների գործածություն
6) Իրազեկվածության աստիճան
7) Ֆինանսավորում և բյուջե
8) Մշտադիտարկում և հաշվետվողականություն

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

Պլանի անվանում	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2025-2029թթ պլան
Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր	Արմավիր համայնք/1 քաղաքային բնակավայր և 10 գյուղական բնակավայր/
Պլանավորման ժամանակաշրջան	2025-2029թթ
Ներկայացվող Պլանի նախատեսված ամսաթվերը վերանայման	2025թ սեպտեմբեր,2027թ սեպտեմբեր
Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	Սևակ Ֆիրզիկյան /<< ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում>> տնօրինություն հիմնարկի աղբահեռացման տեղամաս պետ
Պլանը կազմող անձանց էլ հասցե և հեռախոս	Barekargum@ rambler .ru

Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ հասցե	https://armavircity.am/

3. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ՏԵՍԼԱԿԱՆ

- Ավելի բարեկարգ համայնք
- Համայնքն ուժեղ է իր միասնականության շնորհիվ և կան չնչին թույլ կողմեր, որոնք ժամանակի ընթացքում ստանում են համապատասխան լուծումներ
- Հիմնախնդիրների բացահայտում
- Միասնական,բարեկարգ և ուժեղ համայնք:

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Արմավիր քաղաքը, Լուկաշին, Լենուղի, Խանջյան, Սարդարապատ, Նորավան, Մայիսյան, Հացիկ, Այգեվան, Մյասնիկյան և Արաքս գյուղերը : Համյանքի կենտրոնն է Արմավիր քաղաքը:

Արմավիր համայնքն ունի 65180 բնակչություն և զբաղեցնում է 14944,75 հա տարածք:

ա. Պլանավորման տարածքի նկարագրություն

	Ընդհանուր տարածք	Քաղաքային	Գյուղական	Արդյունաբերական	Գյուղատնտեսական	Կանաչ. անտառային
Տարածքը (հա)	14944,75	2181.99	12812.76	121	10889.29	6.57
Տարածքը տոկոսով ընդհանուրից (%)	100	14,6	85,4	0,8	72,8	0,04

Աղյուսակ 2

Գ. Ժողովրդագրական տեղեկատվություն

Աղյուսակ 3

Գրանցված բնակչություն (մարդ)	Փաստացի բնակվող (մարդ)	Տնտեսությունների թիվ	Բազմաբնակարան շենքերի թիվ	Բնակարանների թիվ
65180	42827	10652	160	5546

դ. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

Աղյուսակ 4

Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները	Քանակ	Նշումներ
Բնակելի նպատակային նշանակության շինություններ		
Բազմաբնակարան բնակելի շենքեր	-	
Անհատական բնակելի տներ	-	
Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ	-	
Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ	-	
Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համարանախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ	-	
Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ	-	
Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ	-	
Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ	-	
Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն	-	

4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ա. Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են.

- մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգված (10000 տոննա)
- մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով /254 կգ/
- մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով /0,69 կգ/

բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը

- **Կոշտ կենցաղային թափոն**՝ աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին »ՀՀ օրենքով սահմանված թափոն,
- **Խոշոր եզրաչափի թափոն**՝ 1խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում,
- **Շինարարական աղբ**՝ քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով առաջացող աղբ,
- **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն,**
- **Փաթեթավորման թափոն**՝ կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավոևման թափոն,
- **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)՝** չշահագործվող սարքավորում, որը սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,
- **Կենսաբանական թափոն**՝ կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ,
- **Պարտեզային թափոն՝** այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,
- **Անվադողեր**՝ մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր,
  - **Վտանգավոր թափոն՝** (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ,դյուրավառ նյութեր,բժշկական թափոն և այլն, հնարավոր ցանկը ներկայացված է հավելվածում:

Աղյուսակ 5

I Թափոնի տեսակը	%	II Թափոնի տեսակը՝ մանրակրկիթ բաղադրության ուսումնասիրության դեպքում	%
Օրգանական	35	Խոհանոցային	
		Այգիներից պուրակներից և այլ կանաչ տարածքներից	
Թուղթ և ստվարաթուղթ	15		
Պլաստիկ	20	Պլաստիկ 22եր	
		պոլիեթիլենային փաթեթավորումներ	
		Պլաստիկ տարաներ	
Ապակի	10		
Մետաղ	10		
Այլ թափոն	10	էլեկտրական	
		տեքստիլ	
		փայտ	
		վտանգավոր	
		Այլ	

5. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Պլանի մշակման մեջ օգտագործվող թափոնների գործածության ձևերը և դրանց

Նկարագրությունները բերվում են ստորև՝ 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

	Թափոններ գործածության ձև	Նկարագրություն
I	Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում	Թափոնների խառը հավաքում և հեռացում օպերատորի կողմից դեպի աղբավայր կամ տեսակավորման կենտրոն: Ինչպես նաև թափոն առաջնացնողի կողմից աղբի ինքնափոխադրում դեպի տեսակավորման կենտրոն
II	Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում	Սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորված հավաքում կամ թափոն առաջացնողի կողմից տեղափոխում դեպի տեսակավորման կենտրոն
III	Թափոնների վերաօգտագործում և վերակիրառում	Ապրանքի բազմակի օգտագործման ի սկզբանե տրված նպատակով (օրինակ՝ ապակե շիշ, ստվարաթղթե տուփ և այլն): Ինչպես նաև երբ այ անձանց համար անցանկալի, ոչ պիտանի նյութերը, դրվում են տնտեսական շրջանառության մեջ այլ նպատակներով:
IV	Թափոնների վերամշակում և օգտահանում	Երբ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում փոխվում են թափոնների ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները և դրանք օգտագործվում են որպես երկրորդային նյութ - վերամշակման միջոցով կենսագազի, բրիկետների, պելետի, բիոդիզելի, այլ վառելիքի ստացում - սննդային թափոնների ակրոբ մշակման (կոմպոստացման) միջոցով պարարտանյութի ստացում կամ չեզոքացում - ջերմային մշակման (կիզման) միջոցով ջերմային կամ էլեկտրական էներգիայի ստացում
IV	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում /	Թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով
VI	Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում	տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրում
VII	Տեղադրում սանիտարական աղբավայրում	տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրում

ա. Թափոնների քանակն ըստ հիմնական տեսակների և դրանց գործածության ձևերի

Աղյուսակ 7

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում տոննա / տարի	Թափոնների գործածության ձևեր							
			I	II	III	IV	V	VI	VII	Նշումներ
			Խառը հավաքում / % ընդհանուր քանակից/	Տեսակավորված հավաքում/ % ընդհանուր քանակից/	Վերաօգտագործում/ կրկնաօգտագործում /% ընդհանուր քանակից/	Վերամշակում և/կամ օգտահանում /% ընդհանուր քանակից/	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում/% ընդհանուր քանակից/	Տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում /% ընդհանուր քանակից/	Տեղադրում սանիտարական աղբավայրում /% ընդհանուր քանակից/	
Կոշտ կենցաղային թափոն										
Խոշոր եզրաչափի թափոն										
Շինարարական աղբ										
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն										
Մնացորդներ										
Փաթեթավորում և փաթեթվածք										
Էլեկտրական և էլեկտրոնային թափոններ										
Կենսաբանական թափոն										
Վտանգավոր թափոն										

➢ **Աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների հավաքում**

բ. Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործածություն

<< Արմավիրի մարզի Արմավիր համայնքում աղբի հավաքումը սովորաբար կատարվում է՝

- Փողոցներում և բնակավայրերում տեղակայված աղբամաններից
- Բնակելի տներից և կազմակերպություններից գրաֆիկով աղբատարների միջոցով
- Ինքնափոխադրմամբ՝ երբ թափոն գոյացնողը կազմակերպում է իր գոյացած թափոնի փոխադրումը տեսակավորման,վերամշակման, օգտահանման կենտրոններ:

Աղյուսակ 8

Թափոնների հավաքման մեթոդ	Ծառայությունից օգտվող բնակչություն / %/	Տեսակավորված հավաքում / տոննա/	Տեսակավորված հավաքում/ %/	Չտեսակավորված հավաքում / տոննա/	Չտեսակավորված հավաքում/ %/	Նշումներ
Աղբամաններից	50				100%	
Աղբախցերից	-					
Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպություններից	50				100%	
Պատվերով՝ տնից կամ կազմակերպություններից	-					
Ինքնափոխադրում	-					

➢ **Աղբահանություն իրականացնող օպերատորներ**

Աղյուսակ 9

Օպերատորի անվանում	Սպասարկվող համայնքներ/ բնակավայրեր	Սպասարկվող տարածքի բնակչության թիվ	Օպերատորի աղբատար մեքենաների թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների տեսակն, տարողությունը (բաց/փակ թափքով, կոմպակտորն)	Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ-, շինարարական և այլն հավաքում	Օպերատորի աշխատանքի գնահատականը (1-ից 5)	Նշումներ
1<< << Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քարեկարգում>> տնօրինություն հիմնարկ	Արմավիր քաղաք	23267	8	2 հատ Կամազ ԿՕ-427, 2հատ ԳԱԶ 53 ԿՕ , 4հատ ԶԻԼ ինքնաթափ	Խառը	5	
2<<Մաքրություն >> ՍՊԸ	Գյուղական բնակավայրեր	19560	3	Աղբատար հատուկ տեխնիկա և ԳԱԶ 53	Խառը	5	

Աղյուսակ 10

Թափոնի տեսակ	Հեռավորություն մինչև աղբավայր, կմ	Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան, կմ	Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն, կմ	Հեռավորություն մինչև այլ գործածության կայանք /վերմշակման գործարան և այլն/, կմ	Նշում ինքնափոխադրման մասին
Կոշտ կենցաղային թափոն	5-10				
Խոշոր եզրաչափի թափոն	5-10				
Շինարարական աղբ	5-10				
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն					
Անվադողեր					
Փաթեթավորում և փաթեթվածք					
Էլեկտրական և էլեկտրոնային թափոններ					

➢ Վերօգտագործում և նախապատրաստում վերաօգտագործման կամ վերակիրառման համար

Աղյուսակ 11

Արտադրողի անվանում	Արտադրանքի տեսակ	Վերադարձվող բաղադրիչ (ապակե, պլաստիկե տարա, փաթեթավորում և այլն)	Վերադարձի/հավաքման մեխանիզմ (ընդունվում է գործարանում, խանութում, ընդունման կետերում)	Սպառողի համար վերադարձի հարմարություն (անհարմար, հարմար)	Նշումներ

➢ Վերանորոգման կարողություններ

Աղյուսակ 12

Արտադրանքի տեսակ	Վերանորոգման կետերի թիվ	Նշումներ
սառնարան		
Լվացքի մեքենա		
Այլ կենցաղային տեխնիկա		
Հագուստ կոշիկ		
Կահույք		
Ավտոպահեստամասեր		
Շինարարություն /պատուհան, դուռ, տանիք և այլն		

➢ Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում

Աղյուսակ 13

Տեսակավորվող թափոնի տեսակ	Հավաքվում է ընդունման կետում (այո/ոչ)	Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ)	Հավաքվում է սպասարկման օբյեկտներից (այո/ոչ)	Հավաքվում է աղբավայրերում (այո/ոչ)
Ապակի				
Պլաստիկ				
Մետաղ				
Թուղթ				
Ավտոմնքենայի մարտկոց				
Այլ թափոններ /նշել/				

➢ Թափոնների գործածության կայանքներ

Աղյուսակ 14

Թափոնների գործածության կայանքներ	Առկայություն (պլանավորման տարածքում առկա է/առկա չէ, առկա է այլ տարածքում)	Հզորություն, հազ տ/տարի	Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ	Նշումներ
Տեսակավորման կենտրոն				
Ապակու վերամշակման կայանք				
Մետաղի վերամշակման կայանք				
Պլաստիկի վերամշակման կայանք				
Թղթի վերամշակման կայանք				
Կոմպոստացման կայանք				
Կենսագազի արտադրման կայանք				
Անաէրոբ մարսման կայանք				
Կենսազերծման/ վերացման կայանք				
Փոխաբեռնման կայան				
Աղբավայր				
Այլ նշումներ				

➢ Աղբավայրեր և աղբանոցներ

Աղյուսակ 15

Աղբավայր /գտնվելու վայրը/	Շահագործող համայնքներ /բնակավայրեր	Աղբավայրի մակերես, հա	Տեղադրվող աղբի տեսակ	Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/	Սեփականության /օգտագործման իրավունք	Շահագործողի անվանում	Աղբի տեղադրման վճարը /<< դրամ/տոննա	Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհատվածի վիճակը
1 Արմավիր համայնք	Արմավիր համայնք	6	Կենցաղային/խառը	Ավագանու որոշում	Համայնքի սեփականություն	Արմավիր համայնք		բավարար
2								

➢ Պատասխանատվության փաստացի բաշխումը

Աղյուսակ 16

Պատասխանատուներ	Իրազեկության բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ	50%	50%		50%					50%
Մասնավոր հատված	50%	50%		50%					50%
Արտադրող									
Բնակչություն									
Քաղաքացիական կազմակերպություն									

Աղյուսակ 17

Թափոնի տեսակ	Իրավական դաշտերում բարձրացում	Խարդ հանքում	Տեսակավորում ձոիում	Տեղափոխում	Վերամշակում/ դիմադրանյութերի	Վերամշակում և/կամ ուսումնասիրում	Տեղադրում ամբարներում
Կոշտ կենցաղային թափոն	ՏԻՄ	ՏԻՄ					ՏԻՄ
Խոշոր եզրաչափերի թափոն	ՏԻՄ						ՏԻՄ
Շինարարական աղբ	ՏԻՄ			ՏԻՄ/ ԲՆ			ՏԻՄ
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն	ՏԻՄ			ԲՆ	ԲՆ	ԲՆ	
Անվադողեր	ՏԻՄ			ԲՆ			
Փաթեթավորում և փաթեթվածք	ՏԻՄ						ՏԻՄ
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն	ՏԻՄ						
Կենսաբանական թափոն	ՏԻՄ			ԲՆ			
Վտանգավոր թափոններ	ՏԻՄ						

- **Անձնակազմի կարողությունների գնահատում**

Աղյուսակ 18

Հմտություն/ ոլորտ	Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը	Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Նշումներ
Թափոնների կառավարման գիտելիքներ	3	3	
ՀՀ օրենսդրության իմացություն	3	4	
Տվյալների հավաքագրում	2	3	
Համակարգչային քարտեզագրում			
Գնումների կազմակերպում	1	5	
Պայմանագրերի կառավարում	1	4	
Գործառնական հմտություններ	4	3	
